

Սիրելի հայրենակիցներ,

Այս տարուայ առաջին եռամսեան բոլորեցինք դիմագրաւելով շատ մը դժուարութիւններ, կողիէն ներս տիրող տնտեսական տագնապին եւ անգործութեան բարձր աճին պատճառով: Մեզի փոխանցուած անպաշտօն տեղեկութիւններուն համաձայն, Կիպրոսէն ներս առ այժմ ունինք մօտաւորապէս 38,000 անգործ, որուն 75 տոկոսը Կիպրահպատակ են, իսկ 25 տոկոսը Եւրոպացի հպատակներ: Նախարարութիւններու յատկացումները եւ նպաստի կրճատումները զգալի դարձան կարգ մը ընտանիքներու մօտ, որուն հետ զուգահեռ վերելք արձանագրեցին ելեկտրականութեան եւ վառելանիւթի սակերը:

Եզմաժամային այս պայմաններուն տակ, մեզմէ կը պահանջուի ծայր աստիճան համբերութիւն, զոհողութիւն եւ խնայողութիւն:

Այս բոլորին կողքին սակայն, կը նշմարենք թէ Կիպրական կառավարութիւնը փորձեր կը կատարէ երկրին տնտեսութիւնը վերականգնելու՝ ներգրաւելով օտար ներդրողներ: Յոյսով ենք, որ տիրող կացութիւնը աստիճանաբար կը բարելաւուի եւ Կիպրոսի ժողովուրդը կը վերագտնէ իր նախկին բարօր կեանքը:

Գալով Կիպրահայ գաղութի ներքին ու ազգային կեանքին, զոհացումով կրնամ ըսել, թէ կը շարունակուին աշխատանքները բոլոր ոլորտներէն ներս, արձանագրելով աշխոյժ մասնակցութիւն եւ արդիւնաւէտ գործունէութիւն:

Առաջին եռամսեային համար մեր գրասենեակին ծրա-

գրած միջոցառումները եւ ձեռնարկները իրագործուեցան մեծ յաջողութեամբ, որոնց մանրամասնութիւնները կրնաք կարդալ «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Այս հանգրուանին կը փափաքիմ յիշել, թէ Կիպրոսի Պետական Զամալսարանէն ներս Զայերէն Լեզուի դասընթացքները, միւթական յատկացումի չգոյութեան պատճառով, մի քանի ամսուայ յապաղում մը արձանագրելէ ետք՝ վերսկսան Մարտ 2012-ին:

Ինչ կը վերաբերի Մանկամտուրի ծրագիրին, հակառակ հետեւողական հետապնդումներուն եւ հերթական հանդիպումներուն, շէնքի շինութեան աշխատանքները որոշ դժուարութիւններու դիմաց կը գտնուին առ այժմ, տիրող տնտեսական ճգնաժամին հետեւանքով: Սակայն, յոյսով եմ որ պիտի կարենանք շրջանցել ստեղծուած արգելքները եւ ծրագիրը դնել իր բնականոն հունին մէջ:

Ինչպէս աւանդութիւն դարձած է, այս տարի եւս պիտի այցելենք Մակարայ Վանք Կիրակի, 13 Մայիս 2012ին եւ վերադարձին, կանգ պիտի առնենք Վիքթորիա Փողոցին վրայ, վայելելու վերամորոգուած Ս. Աստուածածին եկեղեցին ու յարակից կառոյցները: Ներփակ կը գտնէք այս ուխտագնացութեան գծով յայտարարութիւն մը:

Վերջերս, մեր գրասենեակը կը դիմեն շատ մը անհատներ, Զայաստանի Զանրապետութեան քաղաքացի դառնալու առնչութեամբ տեղեկութիւն ստանալու: Դիմումնագիրները արդէն մեր մօտ են եւ նկատի ունենալով Զայաստանի մեր հայրենակիցներուն անձնագրային գործերու չափանիշը, յարմար նկատեցինք դարձեալ հրաւիրել ԶՅ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան նորանշանակ հիւպատոս Պրն. Մարաթ Մելիքեանը, Ուրբաթ 18 եւ Շաբաթ 19 Մայիսին, իր տրամադրութեան տակ դնելով մեր գրասենեակի հնարաւորութիւնները: Այս այցելութեան կապակցութեամբ ներփակած ենք յատուկ թերթիկ մը:

Առ ի գիտութիւն յիշեմ, թէ վերջերս առաջարկ ստացանք Կիպրոսի Կրթութեան եւ Մշակոյթի նախարարութենէն, «Չայերը Կիպրոսի մէջ» վաւերագրական ժապաւէնը տեղադրելու Նախարարութեան պաշտօնական կայքէջին վրայ, այս շարժանկարը կրթութեան ոլորտէն ներս զբաղող անհատներուն տրամադրութեան տակ դնելու նպատակով: Միեւնոյն ատեն, անոնք բարձր գնահատեցին այս ժապաւէնին որակաւոր ու բժախնդիր պատրաստութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Սիրելիներ,

Չայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Զատիկին առիթով ընդունեցէք իմ սրտագին բարեմադրութիւնները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Չամայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Վերջին շրջանին մեր գրասենեակը կը դիմեն նշմարելի թիւով հայրենակիցներ, որոնք անգործութեան պատճառով, կեցութեան հրամաններ նորոգելու դժուարութիւններ կը դիմագրաւեն: Ասոր կողքին, ունինք նաեւ նպաստընկալ անհատներու պարագաներ, որոնք կրճատումի կամ նոյնիսկ նպաստի ամբողջական ընդհատումի հրամայականին դիմաց կը գտնուին: Դժբախտաբար, տնտեսական ճգնաժամին պատճառով հաստատուած օրէնքի փոփոխութիւնները միջամտելու եւ դրական արդիւնքի հասնելու հաւանականութիւնները նուազագոյնի հասցուցած են:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ



Կիրակի, 15 Յունուար 2012-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Ս. Յովհաննու Կարապետի Տօնին առիթով մատուցուած պատարագին եւ հոգեհանգստեան արարողութեան, որմէ ետք տեղի ունեցաւ յիշատակի ոգեկոչում՝ Մելգոնեան Անմահ Բարերարներու դամբանին դիմաց:

Ուրբաթ, 27 Յունուար 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Լիմասոլի Րիալթօ սրահէն ներս տեղի ունեցած «Beast on the Moon» թատերական ներկայացումին, որ կը վայելէր Պետական Ներկայացուցիչին նիւթական աջակցութիւնը: Նշենք, թէ այս թատերերգութեան նիւթը Հայկական Ցեղասպանութենէն վերապրող անհատի մը կեանքին պատմութիւնն էր:

Չորեքշաբթի, 8 Փետրուար 2012-ին, Պրն. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Մարդկային Իրաւապաշտպանի (Ombudsman) Տիկին Լուիզա Սավիտուիի հետ, գաղութը յուզող հարցերու կապակցութեամբ:

Ուրբաթ, 10 Փետրուար 2012-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Թեմական Ժողովի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանի, Վարչական Ժողովի ատենապետ Պրն. Ճոն Կէվիէրեանի եւ փոխ-ատենապետ Պրն. Մանուկ Մկրտիչեանի, տեսակցութիւն մը ունեցաւ UNDP-ACT-ի պատասխանատու Պրն. Քրիստոֆըր Լուիզի հետ, Վիքթորիա փողոցի վրայ գտնուող եւ վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառոյցի ապագայ գործածութեան առնչութեամբ:

Կիրակի, 12 Փետրուար 2012-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Մարոնիքներու եկեղեցւոյ մէջ Ս. Մարուն Տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին, ներկայութեամբ Լիբանանի Մարոնիք համայնքի Պատրիարք Մար Պշարա Պուրոս Ռայիի: Պատա-

րագեն ետք տեղի ունեցավ ճաշկերոյթ՝ ի պատիւ Պատրիարք Ռայիի:



Չորեքշաբթի, 29 Փետրուար 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ Պրն. Սեպուհ Դաւիթեանի, Կիքթորիա փողոցին վրայ հանդիպում մը ունեցավ Կիպրոսի Եւրոպական Միութեան Ներկայացուցչութեան պետ Տիկին Անտրուլլա Քամինարայի հետ, քննարկելու Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ շրջակայ կառոյցներուն ապագայ գործածութեան կարելիութիւնները:

Ուրբաթ, 2 Մարտ 2012-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցավ Կիպրոսի Գործարարներու եւ Արդիւնաբերութեան Միութեան (OEB)-ի կազմակերպած ճաշկերոյթին՝ ի պատիւ Նոպլէան Տնտեսագիտութեան մրցանակակիր Դոկտ. Քրիստոֆորոս Բիսարիտիսին, որ տեղի ունեցավ Նիկոսիոյ OCCHIO սրահին մէջ:

Հինգշաբթի, 29 Մարտ 2012-ին, Պրն. Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մէջ Հոլանտայի դեսպան Ն.Վ. Տիկին Պրէիէ Շուահօֆերի հետ:

Ուրբաթ, 30 Մարտ 2012-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Նիկոսիոյ նորընտիր քաղաքապետ Պրն. Կոնստանդինոս Եորկաճիի հետ, Կիպրահայ գաղութի կարգ մը հարցերու առնչութեամբ:



**Դասախօսութիւն
«Ինչի՞ կարիքը ունին երիտասարդները
այսօր գործ ճարելու»**

Չորեքշաբթի, 1 Փետրուար 2012-ին, կազմակերպութեամբ Երեսփոխանական Գրասենեակին, Ազգային Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ շահեկան դասախօսութիւն մը՝ «Ինչի՞ կարիքը ունին երիտասարդները այսօր գործ ճարելու» այժ-



մեական միւթով: Ներկայ էին մտաւորապէս 120 երիտասարդներ ու ծնողներ: Օրուան բանախօսը Դոկտ. Թէոտոր Բանայիտու, որ Կիպրոսի Միջազգային Վարչութեան 3ին-

նարկի տնօրէնն է եւ միեւնոյն ժամանակ այցելու դասախօս՝ Harvard Համալսարանի, հմտութեամբ եւ մասնագէտի մօտեցումով ներկայացուց օրուայ հրամայականները եւ պահանջները, մեծ տպաւորութիւն ձգելով ներկաներուն մօտ:

Ձեռնարկի աւարտին, Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան շնորհակալութիւն յայտնելով դասախօսին, անոր յանձնեց երախտագիտական գիրով յուշանուէր մը:

Կիպրահայ գաղութի կեանքէն

Շաբաթ, 21 Յունուար 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան ՀԵՄ-ՀՅԸՄ-ի կազմակերպած «Թալիհը եւ իր բարեկամները Կիպրոսի մէջ» երաժշտախառն ներկայացումին, որ տեղի ունեցաւ «Փասիտի» սրահին մէջ

Երկուշաբթի, 13 Փետրուար 2012-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, յատկապէս հրաւիրուած ըլլալով, ներկայ գտնուեցան Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի եւ Կիպրոսի Համալսարանի Թրքագիտական բաժանմունքի կազմակերպած Նուրիցա Մաթոսեանի «Հրանդ Տինք - Երկու Ազգերու Սիրտը» վաւերագրական ժապաւէնի ցուցադրութեան, որ տեղի ունեցաւ Կիպրոսի Համալսարանի հանդիսասրահին մէջ:

Ուրբաթ, 24 Փետրուար 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի եւ Գաղթականներու Համակիպրական Միութեան կազմակերպած միացեալ ձեռնարկին Ցվետանա Փասկալեվայի «Ղարաբաղի Վերքերը» վաւերագրական ժապաւէնի ցուցադրութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Համալսարանի UNESCO սրահին մէջ:

Չորեքշաբթի, 14 Մարտ 2012-ին, յատուկ հրաւեր ստանալով, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ընկերակցութեամբ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ ու Լիազօր Դեսպան Ն.Վ. Գագիկ Ղալաչեանի ու իր ազնիւ տիկնոջ, ներկայ գտնուեցան Համազգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած Գրական Երեկոյին, որ տեղի ունեցաւ ՀԵՄ-ՀՄԸՄ-ի ակումբի սրահին մէջ:

Կիրակի, 18 Մարտ 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրոսի ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած ամանդական Միջինքի ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ ՀԵՄ-ՀՄԸՄ-ի ակումբին մէջ:

«Հայաստանը Բեմին Վրայ» «Armenia on Stage»



Կիրակի, 11 Մարտ 2012-ին, Երեսփոխանական Գրասենեակի կազմակերպութեամբ, Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, աննախընթաց յաջողութեամբ տեղի

ունեցաւ «Armenia on Stage» համերգը: Մեծ թիւով հայեր ու օտարներ, Լառնաքայէն, Լիմասսօլէն եւ նոյնիսկ Պաֆոսէն, եկած էին վայելելու հայկական երգն ու երաժշտութիւնը: Նշենք, թէ ելոյթէն օրեր առաջ արդէն սպառած էին բոլոր տոմսերը:



Ուրախութեամբ կ'ընդգծենք, թէ այս մշակութային ձեռնարկը, գաղութն ներս կը համարուի տարուան ամենամեծ միջոցառումը: Ելոյթին ներկայ էին պետական մակարդակի բարձրաստիճան մօտ 150 անձնաւորութիւններ՝ դեսպաններ, քաղաքապետներ, կղերականներ եւ այլ հրաւիրեալներ: Ներկայ էր նաեւ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանն ու իր ազնիւ տիկինը:

Պետական Ներկայացուցիչ Պրն. Մահտեսեանի բացման խօսքէն ետք, գրեթէ երկու ժամ տեւողութեամբ ելոյթ ունեցան հայրենի տաղանդաւոր եւ միջազգային ճանաչում ունեցող արուեստագէտներ, հայ թէ օտար երաժիշտ-

ներու յօրինումներով, անմոռանալի տպաւորութիւն ձգելով հանդիսատեսներուն մօտ: Հիանալի երկու կատարումներով ելոյթ ունեցան Տիկին Սոնա Կարկալոյեան, ինչպէս նաեւ Համազգայինի «Սիփան» պարախումբը:

Ելոյթէն ետք, հայրենի արուեստագէտները յիշատակելի երեկոյ մը անցուցին հիւրասիրուելով Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններուն բնակարանը:

Յաջորդ օրը, անոնք շրջապտոյտ մը ունեցան այցելելով Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցին՝ ուր դիմաւորուեցան Տէր Մոմիկ Քահանային կողմէ, ապա Նարեկ Վարժարան, որոնց դիմաւորեց տնօրէնուհի Տիկին Վերա Թահմազեան: Աշակերտները, սրահին մէջ հաւաքուած, անհամբեր կը սպասէին հիւրերուն ժամանման, որոնք տաքուկ ծափահարութիւններով դիմաւորեցին արուեստագէտները: Մի քանիին կատարողութեամբ, կարճատեւ ելոյթ մը հրամանցուեցաւ աշակերտներուն:

Շարունակելով շրջապտոյտը, խումբը շրջան մը կատարեց Սելգոնեան Կրթական Հաստատութեան կառոյցէն ներս ու ապա ուղեւորուեցաւ դէպի Լառնաքայի ծովափը: Նոյն օրը երեկոյեան, անոնք մեկնեցան Կիպրոսէն, երախտագիտական յատուկ շնորհակալութիւն յայտնելով կազմակերպողներուն եւ Կիպրահայ գաղութին ջերմ ընդունելութեան համար:

Շնորհաւորագիր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 27 Յունուար 2012-ին շնորհաւորագիր մը յղեց Կիպրոսի մէջ Ֆրանսայի դեսպան Ն.Վ. Ժան-Մարք Ռիվզին, շնորհաւորելով Ֆրանսայի նախագահ Ն.Վ. Նիքոլա Սարքոզին եւ Ֆրանսայի Ծերակոյտը, Հայոց Ցեղասպանութիւնը քրէականացնող օրէնքի որդեգրումին առնչութեամբ՝ անոնց առած խիզախ որոշումին համար:



Ծանօթանանք Կիպրոսի Չանրապետութեան Օրէնքներուն

Տնտեսութեան Նախարարութիւն

Տնտեսութեան Նախարարութիւնը 02.02.2012 թուականին երեխաներու նպաստին կապակցութեամբ յայտարարութիւն մը հրապարակեց, ըստ որուն, Տնտեսութեան Նախարարութեան Յատկացումներու եւ Նպաստներու Սպասարկութիւնը, 2012 թուականին համար անմիջապէս պիտի ընդունի բազմազաւակ (երեք եւ ւեւի) երեխայ ունեցող ընտանիքներուն դիմումները:

Ինչ կը վերաբերի մէկ կամ երկու երեխայ ունեցող ընտանիքներուն, որոնք 2012 թուականի վերջաւորութեան պիտի ստանան նպաստը, ապա դիմումները պէտք է ներկայացուին 1 Յունիս 2012-էն ետք:

Նշենք, որ համաձայն Ներկայացուցիչներու Տան այս առնչութեամբ քուէարկած օրինագիծին, տրամադրուած նպաստները պիտի ճշդուին ընտանիքին 2011 թուականի եկամուտին, անշարժ գոյքերուն եւ այլ ունեցուածքներուն համեմատ:

Երեխայի Նպաստ ստանալու դիմում կրնան ներկայացնել մեկ զաւակ ունեցող ընտանիքներ, որոնց տարեկան եկամուտը չի գերազանցեր €49,000, իսկ երկուքէն չորս զաւակ ունեցող ընտանիքներ, որոնց եկամուտը չի գերազանցեր €99,000: Չորսէ աւելի զաւակ ունեցող ընտանիքներուն համար, իւրաքանչիւր զաւակի համար եկամուտի գումարին վրայ €10,000 կ'աւելնայ:

Դիմումնագիրները կարելի է ստանալ Տնտեսութեան Նախարարութեան Յատկացումներու եւ Նպաստներու Սպասարկութեան Գրասենեակէն, Քաղաքայիններու Սպասարկութեան Կեդրոններէն (Κέντρα Εξυπηρέτησης του Πολίτη) Կիպրոսի բոլոր քաղաքներուն մէջ, եւ կամ այցելելով կայքէջը:

Դիմումները ներկայացնելու վերջին ժամկետը 31.12.2012 է:

Ուխտագնացութիւն
Սուրբ Մակարայ Վանք եւ այցելութիւն
Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցի

Հաճոյքն ունինք տեղեկացնելու մեր համայնքի անդամներուն, թէ Երեսփոխանական Գրասենեակի եւ Ազգային Առաջնորդարանի միացեալ կազմակերպութեամբ, Կիրակի 13 Մայիս 2012ին, տեղի պիտի ունենայ ուխտագնացութիւն դէպի Ս.Մակարայ Վանք:

Այս ուխտագնացութիւնը կը վայելէ Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UNFICYP) հսկողութիւնը:

Այս տարի, Մակարայ Վանքէն վերադարձին, կանգ պիտի առնենք Վիքթորիա փողոցին վրայ, տեսնելու վերջերս վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցին ու յարակից կառոյցները:

Կը խնդրուի բոլոր անոնցմէ, որոնք կը փափաքին մասնակցիլ այս ուխտագնացութեան, արձանագրուիլ Երեսփոխանական Գրասենեակի մօտ հեռածայնելով 22-454540 թիւին, փոխանցելով հետեւեալ մանրամասնութիւնները.-

- ♦ Անուն/Մականուն, ծննդեան թուական եւ վայր
- ♦ **Եւրոպական I.D.ի թիւ կամ ի զօրու անցագիրի (passport) թիւ**
- ♦ Քաղաքացիութիւն

Մասնակցութեան սակ՝ €12.00

Կը խնդրուի հեռածայնով փոխանցուած եւրոպական I.D.ին կամ անցագիրը (passport) անպայմանօրէն ձեր հետ ունենալ ուխտագնացութեան օրը:

Հանրակառքի սպասարկութիւն եւ մեկնում Նիկոսիոյ Ազգային Առաջնորդարանէն կ.ա. ժամը ճիշդ 11:00ին:

Արձանագրութեան վերջին օր՝ Երկուշաբթի 7 Մայիս 2012

Երեսփոխանական Գրասենեակ

Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ
 Քրիստոսի Յարութեան
 Սուրբ տօնին առիթով
 կը շնորհաւորեն
 Կիպրահայ Յամայնքը
 եւ մեր հայրենակիցները
 մաղթելով՝ առողջութիւն եւ
 արեւշատութիւն

Քրիստոս յարեալ ի մեռելոց,
 Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցէ office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy